Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման համար ԵՏՍՍ-ում ներգրավվել են 183, իսկ ՄՏՍՍ-ում 127 պայմանագրային աշխատակիցներ: 01.08.2018թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՍ-ում 220.713, իսկ ՄՏՍՍ-ում 170.493 պայմանագրեր:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Ծառայություններ ստացող բաժանորդների թիվը	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	305.073	211.741	69.4
		Իրավաբանական անձ	14.496	8.972	61.9
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	201.982	164.120	81.3
		Իրավաբանական անձ	7.912	6.373	80,5
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	507.055	375.861	74.1
		Իրավաբանական անձ	22.408	15.345	68.5

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հուլիս ամսվա դրությամբ բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Գործող բաժանորդների ընդհանուր քանակը	Ծախսող բաժանորդների քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	396.225	305.073	77,0
		Իրավաբանական անձ	19.835	14.496	73,1
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	313.436	201.982	64.4
		Իրավաբանական անձ	12.211	7.912	64.8
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	709.661	507.055	71,5
		Իրավաբանական անձ	32.046	22.408	69,9

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցներ են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): ԵՏՍՍ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 269 նոր բաժանորդներ, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 169 նոր բաժանորդ:

2.2. Հասույթ

2018թ. հուլիս ամսվա սպառման ծավալները համեմատած նախորդ ամսվա հետ զգալիորեն ավելացել են, որը պայմանավորված է համեմատաբար շոգ եղանակային պայմաններով: ՄՏՍՍ սպասարկման տարածքում սպառման ծավալը նախորդ ամսվա համեմատ ավելացել է մոտ 562.0 հազ.լիմ-ով (կամ 17%-ով), իսկ ԵՏՍՍ՝ մոտ 820.0 հազ.լիմ-ով (կամ 11.55 %-ով):

Շարունակվում է կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև «Լոռի» և «Շիրակ» տեղամասերի սպասարկման տարածքի բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ, ավելի զգայուն


ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս հատուկ դիտահորերում, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունները:


Բոլոր փոխարինված ջրաչափերը ուղարկվում են լաբորատոր ստուգաչափման: Հուլիս ամսվա ընթացքում ԵՏՍՏ-ում ստուգաչափվել է 2967, իսկ ՄՏՍՏ-ում՝ 1596 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	07.2018թ. ստուգաչափված ջրաչափերի քանակը	որից		
				Սարքին	Անսարք	Միջամտած
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	2486	1819	497	170
2		Իրավաբանական անձ	126	75	43	8
		Ընդամենը	2612	1894	540	178
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	1500	1057	316	127
2		Իրավաբանական անձ	96	49	35	12
		Ընդամենը	1596	1106	351	139

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասը ունեն խնդիրներ: «Միջամտած» ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Լաբորատոր ստուգաչափման արդյունքում անսարք և միջամտած ջրաչափերի մասով ընթացիկ ամսում Բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել 136.436մ3 վերահաշվարկված հասույթ:

Ստորև, գրաֆիկային տեսքով, բերված է 2018թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)




2018թ. հուլիս ամսին Ընկերության Առևտրային Տնօրինությունների կողմից ձևավորված հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.


Տարածաշրջան	Ամիս	Առաջադրանք հազ.մ ³	Փաստացի հազ.մ ³	Տարբերություն %, հազ.մ ³
Երևան	Հուլիս	7351	7918	7,72
Մարզեր		3.699	3.863	4,44
Ընդամենը		11.050	11.781	6,62

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



2.3. Գանձուև

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հուլիս ամսին գանձումը ԵՏՍՍ-ում կազմել է 1.195 մլն.դրամ, իսկ ՄՏՍՍ-ում՝ 507.6 մլն.դրամ:

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով Ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով, հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված՝ անհատական ջրամատակարարման դադարեցումներ, մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Ընդամենը
Երևան	Առաջադրանք	1.145.130	1.136.846	1.124.295	1.092.631	1.164.996	1.256.334	1.271.520	8.191.752
	Հավաքագրում	809.156	950.219	1.113.310	961.906	1.171.895	1.173.069	1.194.706	7.374.261
	%	70.66	83.58	99.02	88.04	100.59	93.37	93.96	90.02
Մարզեր	Առաջադրանք	485.310	471.395	415.475	464.364	443.557	481.998	481.998	3.244.097
	Հավաքագրում	404.088	443.632	490.015	476.166	520.132	501.615	507.621	3.343.271
	%	83.26	94.11	117.94	102.54	117.26	104.07	105.32	103.06
Ընդամենը	Առաջադրանք	1.630.440	1.608.241	1.539.770	1.556.995	1.608.553	1.738.332	1.753.518	11.435.849
	Հավաքագրում	1.213.244	1.393.850	1.603.325	1.438.073	1.692.027	1.674.685	1.702.327	10.717.532
	%	74.41	86.67	104.13	92.36	105.19	96.34	97.08	93.72

2.4 Դեբիտորական պարտքեր

Տարածաշրջանների Առևտրային Տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Հուլիս ամսվա ընթացքում ԵՏՍՍ կողմից կնքվել է թվով 71 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 6.98մլն. դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՍ կողմից՝ թվով 78 պարտքի մարման ժամանակացույց, մոտ 3.82մլն. դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափեր և պարտատերերի ցուցակները ներկայացվում են Իրավաբանական վարչություն:

Ստորև, աղյուսակային տեսքով, ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը՝ ըստ քանակի և գումարի:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2018թ		Բավարարված		Մերժված		2017-2018թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
1692	129042010	943	67753665	20	5133333	2184	170745550	579	45545357

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդներին հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում, իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում:


Տարածաշրջան	Պարտքը 01.08.2018թ. դրությամբ (մլն. դրամ)	Այդ թվում մայիս ամսվա հասույթ (մլն. դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	2.813,4	1.459,5
Բնակիչ-բաժանորդներ	1.833,6	927,4
Իրավաբանական անձեր	979,8	532,1
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1.975,6	646,3
Բնակիչ-բաժանորդներ	1.593,2	487,0
Իրավաբանական անձեր	382,3	159,4
Ընդամենը, այդ թվում	4.788,9	2.105,8
Բնակիչ-բաժանորդներ	3.426,9	1.414,4
Իրավաբանական անձեր	1.362,1	691,5

Հարկ է նշել, որ Մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չի առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:


Միաժամանակ ՄՏՍՍ մասով դեբիտորական պարտքերի մեջ ներառված են 01.08.2018թ. դրությամբ հանրապետական բյուջերից չվճարված մոտ 85.0 մլն. դրամ պարտքը, որը նախատեսվում է վճարել հաջորդ ամիսների ընթացքում:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում շուրջ 114.56մլն. դրամը կուտակվել է երկու բաժանորդներին՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ին և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքին մեծածախ սակագնով մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց՝ պարբերաբար չվճարելու պատճառով:

2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Երևան)



2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



ՄՏՍՍ մասով դեբիտորական պարտքի աճը պայմանավորված է հուլիս ամսվա հասույթի աճով մոտ 627.0մլն դրամ, որը ենթակա է վճարման օգոստոս ամսին:

2.5 Ջրաչափեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.08.2018թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	386.869	303.169	78,36	19.305	14.491	75,06
	Առանց ջրաչափի	9.356	1.904	20,35	530	5	0,94
Մարզեր	Ջրաչափով	283.819	196.161	69,11	11.801	7.908	67,01
	Առանց ջրաչափի	29.617	5.821	19,65	410	4	0,98
Ընդամենը	Ջրաչափով	670.688	499.330	74,45	31.106	22.399	72,01
	Առանց ջրաչափի	38.973	7.725	19,82	940	9	0,96

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ տվյալների բազայում 01.08.2018թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	512.492	273.941	53,45	22.031	4.043	18,35
Մարզեր	330.584	81.497	24,65	13.964	1.715	12,28
Ընդամենը	843.076	355.438	42,16	35.995	5.758	16,00

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում նոր տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 2913, իսկ Մարզերում 1679 հատ ջրաչափական սարք:

Այդ թվում ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 52 իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 433 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա: Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

Հասցե	Ջրաչափերի ընդամեն քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Շերամի	6.079	4.817	79.2
Սվաճյանի	1.461	1.193	81.7
Օհանովի	1.688	1.262	74.8
Զ.Անդրանիկի	1.531	822	53.7
Առնո Բարաջանյանի	4.789	2.549	53.2
Ջրվեժ Մայակ թաղ.	1.891	1.458	77.1
Ջրվեժ Բանավան	1.399	1.127	80.6
5 զանգված	6.280	3.639	57.9
7 զանգված	4.609	3.101	67.3
8 զանգված	3.808	2.255	59.2
ԸՆԴԱՄԵՆԸ	33.535	22.223	66.3

«Լոռի» տեղամասում Ընկերության Վարչական և Տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր: Հուլիս ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են կատարվել թվով 9 հասցեներում, որտեղ առկա 2.788 ջրաչափից հուլիսին փոխարինվել է 1.800 ջրաչափ (մոտ 64.6%):

Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

Հասցե	Ջրաչափերի ընդանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Ք.Վանաձոր, Բսահակյան	620	433	69.8
Ք.Վանաձոր, Բսահակյան 1 նրբ.	237	183	77.2
Ք.Վանաձոր, Բսահակյան 2 նրբ.	116	71	61.2
Ք.Վանաձոր, Ավետիսյան	74	47	63.5
Ք.Վանաձոր, Աղայան	517	385	74.5
Ք.Վանաձոր, Պ.Սևակի	162	102	63.0
Ք.Վանաձոր, Շինարարների	356	231	64.9
Ք.Վանաձոր, Ուսանողական	250	170	68.0
Գ.Գուգարք	456	178	39.0
ԸՆԴԱՄԵՆԸ	2.788	1.800	64.6

2.6 Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են ՏՏ տնօրինությանը՝ ջրագրվում իրականացնելու նպատակով:


Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:



Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	214	156.396	26.946.073
Մարզեր	194	83.226	14.086.600
Ընդամենը	408	239.622	41.032.673

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ








3.1. Ջրամատակարարման շարունակականություն








Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի հուլիս ամսվա շարունակականության տվյալները՝ 97.7%, որոնք 0.3%-ով ավել են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ: Մյուս բոլոր քաղաքների և գյուղական համայնքների համար ջրամատակարարման փաստացի տևողության և հայտարարված գրաֆիկների միջև դեռևս առկա է զգալի տարբերություն:

Ջրամատակարարման շարունակականություն (Երևան)



Հաշվետու ամսվա ընթացքում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինություններում թվով 60 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 12-ը անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից: Ստորև ներկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները.








3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում

Հաշվետու ամսվա ընթացքում Էլ.էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 185.371կՎտ/ժ (36.72%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ստորև ներկայացված են հուլիս ամսվա ընթացքում շեղում ունեցող հասցեներից որոշները.


Հասցե	Հայտնաբերված թերություններ	Ամսական կՎտ/ժամ
Ք.Շիրակ, Մայիսյան ՕԿՁ	Հաշվիչի սխալ աշխատանք	2700
Ք.Երևան, Արգել պ/կ	Հաշվիչի սխալ աշխատանք	2000
Ընդամենը		4700

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 132 հասցե: Թվով 2 պոմպակայանում հայտնաբերվել են հավելագրումներ: Այդ մասին տեղեկացվել են ՀԷՑ ՓԲԸ-ի համապատասխան ծառայությունները՝ թերությունները վերացնելու համար:

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների աշխատանքի և իրականացրած վերահսկողության արդյունքում Էլ.էներգիայի ծախսը նվազել է 5.297կՎտ/ժ (17%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

կՎտ


Էջմիածին



● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ. էներգիայի ծախսը նվազել է 2.897 կՎտ/ժ (8%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:


կՎտ

Շիրակ




Հուլիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ.էներգիայի ծախսն ավելացել է ամսական 1.087.286կՎտ/ժամ (35.11%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ.էներգիայի ծախսը նվազել է ամսական 63.692կՎտ/ժ (2.01%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



Ընդհանուր էլ. էներգիայի ծախսն ավելացել է ամսական 1.177.700կՎտ/ժամ (15.85%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՏՀ խմբի կատարած աշխատանքներ


- SS-ների ինժեներների կողմից ներկայացրած ջրամատակարարման և ջրահեռացման ցանցում կատարած աշխատանքների համակարգում, համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում ԱՏ համակարգ:
- «Բնտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում՝ տեղամասերի մասնագետ-տեսուչների հետ: Հավաքագրված տեղեկատվության ներմուծում ԱՏ համակարգ և փոխանցում Առևտրային տնօրինություններին՝ բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով: Թվով 180 ֆիզիկական և 47 իրավաբանական բաժանորդների տեղադիրքերի ճշտում Երևան քաղաքում:
- Աշտարակ քաղաքի բաժանորդների տեղադիրքերի ճշտման աշխատանքների մեկնարկ:
- Արևմուտք SS-ի համար մի շարք քարտեզների սպում A3 ֆորմատով:
- Մեծաձախ և մանրաձախ համայնքների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում՝ թարմացված տեղեկատվության հիման վրա: Ստեղծված տվյալների բազայում համայնքներում բնակվող և սպասարկվող բնակչության թվաքանակի ներառում:

- Երևանում տեղադրված ճնշման կարգավորիչ փականների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում ԱՏ համակարգում:
- Արմավիր մարզի Էջմիածին քաղաքի և հարակից գյուղերի՝ Շահումյան, Պողոնք, Նորակերտ, Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի և հարակից գյուղերի՝ Նորատուս, Սարուխան, Լճափ, Կարմիր գյուղ, Ծովագարդ գյուղերի, Սևան քաղաքի և հարակից Լճաշեն գյուղի ու ճամբարակ քաղաքի վերաբերյալ ԱՏՀ-ում տվյալների բազայի ստեղծում՝ հիմք ընդունելով առկա կատարողականները: Ստեղծված տվյալների բազան ներառում է տեղեկատվություն ՕԿՋ-ների, պոմպակայանների, քլորակայանների և խորքային հորերի տեղադիրքերի կոորդինատների վերաբերյալ:
- Երևան քաղաքի կոյուղագծերի թվայնացում՝ հիմք ընդունելով սպասարկման տեղամասերի կողմից տրամադրված հատակագծերը:
- «Լանջազատ-Արարատ» ջրատարի սխեմայի կազմում և մշակում:
- ԱՏՀ-ում տվյալների բազայի ստեղծում՝ ՀՀ տարածքում պոմպակայանների տեղադիրքերի ճշտված տեղեկատվության հիման վրա:
- ՀՀ-ում առկա ջրատարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, տվյալների բազայի ստեղծում:

3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ


Հաշվետու ամսում կարգավարների խումբը «SCADA» և «LOCATOR» համակարգերի միջոցով առցանց կառավարել է և հետևել «Վեդրիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքին, ջրամբարների լցվածությանը, ճնշումային լոգերներին, ջրաչափական սարքերի աշխատանքին և բաշխիչ ցանցի ջրում առկա ԲՏԱԳՐԱԿԱՆ քլորի համապատասխանությանը սահմանված չափաբաժնին:

● «Արմավիր» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող «Արտամետ» պոմպակայանի միջոցով ջուրը մատակարարվում է գ.Արևադաշտ, գ.Արտամետ և «Էռնեկյան» ՕԿՋ: Արևադաշտ գյուղի ջրամատակարարումը տեղի է ունենում ամենօրյա ժամային գրաֆիկով՝ 09:00-12:00-ն ընկած ժամանակահատվածում, իսկ գ.Արտամետում և «Էռնեկյանի» ՕԿՋ-ում մատակարարման ժամային գրաֆիկը պայմանավորված է տվյալ տարածքներում գտնվող ՕԿՋ-ների լցվածությամբ: Նշված ՕԿՋ-ներում տեղադրված մակարդակաչափը միացված է «Լոկատոր» ծրագրին, որի միջոցով ստացված տվյալներից պարզվել է, որ «Արտամետ» ՕԿՋ մղվող ջրատարի վրա առաջացել է վթար: Այդ մասին տեղեկացվել է «Արմավիր» տեղամասը, որի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է վթարի վայրը: Վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար դադարեցվել է «Արտամետ» պոմպակայանի աշխատանքը, ինչից հետո կատարվել է D=200մ պողպատե խողովակաշարի գողում: Ստորն ներկայացված է «Արտամետ» ՕԿՋ-ի մակարդակաչափից ստացված գրաֆիկական պատկերը:




● «Շահումյան» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Շերամի փողոցում տեղադրված ջրաչափը միացված է «Լոկատոր» ծրագրին: Ջրաչափից ստացված տվյալներից պարզվել է, որ տվյալ փողոցում սպառվող ջրաքանակը աճել է՝ 100լ/վ-ից հասնելով 130լ/վ-ի: Այդ մասին տեղեկացվել է վերոնշյալ տեղամասը, որի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է վթարի ստույգ վայրը, ինչից հետո հայտարարվել է վթարային ջրանջատում: Վթարը վերացվել է գողման աշխատանքների միջոցով:

Ստորև ներկայացված է Շերամ փողոցի ջրաչափից ստացած գրաֆիկական պատկերը.




● Բարձրաշեն գյուղի հարակից տարածքում գտնվող ջրթափ փականը հաշվետու ամսվա ընթացքում ոռոգման նպատակներով պարբերաբար բացվել է անհայտ մարդկանց կողմից: Ջրագողությունը ամեն անգամ կազմել է մինչև 100լ/վ, ինչը ակնհայտ երևացել է ջրթափ փականից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող «Նուբարաշեն» համայնքի տարածքում գտնվող ջրաչափից ստացված տվյալներից: Ջրատար համակարգի կարգավորման խմբի աշխատակիցներն արագ արձագանքելով փակել են ջրթափ փականը: Ստորև ներկայացված է «Նուբարաշեն» համայնքի տարածքով անցնող «Գառնի» ջրատարի վրա տեղադրված ջրաչափի գրաֆիկական պատկերը.



**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ**





4.1 Համակարգչային ցանց

Հուլիս ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ համակարգչային և ցանցային աշխատանքները.

- «M2C» նախագծի շրջանակներում տրամադրվել են «Amazon AWS» և «Google Cloud Platform» համակարգերի մուտքային իրավասություններ թեստավորումների իրականացման համար:
- Լրատվական ծառայությանը տրամադրվել են «Google Analytics» ծրագրային փաթեթի մուտքի արտոնություններ:
- Թարմացվել են բոլոր «Linux» օպերացիոն համակարգով սերվերները:
- Մեկնարկել են «Veolia» Խմբի «Malware Prevention» փաթեթի թեստավորումները և ինտեգրացման պլանավորումը:
- Մեկնարկել է «VPN» թունելի ստեղծման ծրագիրը՝ Հայաստանի «Veolia Djur» ՓԲԸ-ի և «Veolia» Խմբի Փարիզի գլխավոր գրասենյակի միջև:
- ԵՏՍՍ «Մաշտոց» տեղամասի նոր հասցեում կատարվել են համակարգչային և հեռախոսային ցանցի մոնտաժային աշխատանքներ, կարգաբերվել են համակարգիչները, միացվել են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ աշխատանքային ցանցին:
- «Թալին» և «Աբովյան» տեղամասերում կատարվել են համակարգչային և հեռախոսային ցանցի մոնտաժային աշխատանքներ, կարգաբերվել են համակարգիչները, միացվել են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ աշխատանքային ցանցին:

4.2 Ինտերակտիվ համակարգ

- Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից կատարվել են մի շարք փոփոխություններ ինտերակտիվ և փաստաթղթաշրջանառության համակարգերում:
- Շահագործման տարածաշրջանների տնօրինությունների համար ստեղծվել և ներդրվել է նոր ծրագրային ապահովում, որով հնարավոր է վթարային ջրանջատումների դեպքում կարճ հաղորդագրության միջոցով նախապես ծանուցել բոլոր ֆիզիկական բաժանորդներին վթարի մասին, ինչպես նաև ջրամատակարարման վերսկսման մասին: Ներդրման փուլում կատարվել են մի շարք ծրագրային փոփոխություններ կապված ավելի արդյունավետ աշխատանքների կազմակերպման և տվյալների կառավարման հետ: Ծրագիրը հնարավորություն է տալիս համապատասխան աշխատակիցներին ծանուցել վթարի մասին և հետագայում ուսումնասիրել տվյալ ամսաթվին վթարի հետևանքով ջրագրկված բաժանորդների քանակությունը:
- Մի շարք հաշվետվություններ են տրամադրվել ՋՏՊ կոմիտեին, ՀԾԿՀ և Ընկերության ստորաբաժանումներին:
- Մի շարք ծրագրային թարմացումներ են կատարվել փաստաթղթաշրջանառության համակարգում:

4.3 Բջջային օպերատորներ և ինտերնետ


Հաշվետու ամսվա ընթացքում ք. Երևան, Հասարակության 10/6 հասցեում միացման է տրվել տվյալների հաղորդման օպտիկամանրաթելային կապուղի և «VoIP» տեխնոլոգիայով գծային հեռախոսակապ:

4.4 Նոր սարքավորումներ և ծրագրեր

Հաշվետու ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար Հաճախորդների սպասարկման բաժնի համար ձեռք են բերվել թվով 3 բազմաֆունկցիոնալ սարքեր:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





● Հուլիս ամսին Հանրային կապերի ծառայության կողմից պատրաստվել է հինգ հեռուստառեպորտաժ՝ Ընկերության աշխատանքը սպառողներին ներկայացնելու համար: Դրանք վերաբերել են Էջմիածնի ջրամատակարարման բարելավմանը, Կոտայքի Մայակովսկի համայնքում ապօրինի ջրագծերի հայտնաբերմանը, Ոսկեվազ գյուղում նոր ջրագծի կառուցմանը, Երևանում Լենինգրադյան-Սեբաստիայի խաչմերուկում նոր կոյուղագծի կառուցմանը և «Արարատյան» պոմպակայանի աշխատանքին:

● Նման ակտիվությունը պայմանավորված էր հուլիսին համակարգում ստեղծված ոչ դյուրին իրավիճակով, ԶԼՄ-ների հետ ակտիվ աշխատելու ու նրանց միջոցով Ընկերության աշխատանքի ողջ ծավալը, բարդությունն ու կարևորությունը հանրությանը ներկայացնելու անհրաժեշտությամբ:

● Այսպես, համակարգի գործունեությունը որպես կանոն լուսաբանվել է երեք «Հ2», «Կենտրոն» և «ATV» հեռուստաալիքների ուժերով: Մակայն որոշ դեպքերում ներգրավվել են նաև այլ լրատվամիջոցներ: Օրինակ, «Արարատյան»



պոմպակայան այցելելիս հրավիրվել են նաև «Արմենիա» ու «Հ3» հեռուստաալիքները: Դա բացատրվում է միջոցառման կարևորությամբ ու բարձրացվող խնդրի հանրային հնչեղությամբ: Մասնավորապես «Արարատյան» այցելությունը հանդիսացավ վերջին երրորդ մասը այդ պոմպակայանում հունիսի 30-ի վթարի պատճառով Երևանում ստեղծված բարդ իրավիճակի պարզաբանմանն ուղղված աշխատանքի:



● Հուլիսի 3-ին մի խումբ լրագրողներ, այդ թվում «Հանրային» հեռուստաալիքից, այց են կատարել Աշտարակ քաղաքում գտնվող Կենտրոնական կարգավարական ծառայություն հանրապետությունում ջրամատակարարման վիճակին ծանոթանալու ու «Վեոլիա Ջրի» պատասխանատուներից պարզաբանումներ ստանալու համար:

Հուլիսի 6-ին, արդեն կենտրոնական գրասենյակում, մոտ երկու տասնյակ լրատվամիջոցների լիարժեք պարզաբանում է տրվել այդ օրերին ջրանջատման պատճառների, ձեռնարկված միջոցների ու ստեղծված իրավիճակի մասին: Մասնավորապես նշվել է, որ բոլոր ջրաղբյուրներն ու ջրային կառույցներն արդեն աշխատում են լիարժեք ու որ 1-2 օրից Երևանում ջրամատակարարումը վերջնականապես կկարգավորվի:

Ընկերության գլխավոր գործառնական տնօրենը նույն խնդրով հյուրընկալվել է «Արմենիա» հեռուստաալիքի «Բանաձև» հաղորդաշարին:



● Հանրության հետ հաղորդակցման վերջին փուլը հանդիսացել է լրագրողների այցը պոմպակայան (ինչպես նաև այնտեղից ջուր ստացող «Արին-Բերդ» ՕԿՁ), որոնց ուղեկցում էին ոչ միայն համակարգի աշխատակիցները, այլև երկու հասարակական կազմակերպությունների ղեկավարներ: Նրանք հնարավորություն են ունեցել տեղում ծանոթանալու իրավիճակին ու համոզվելու, որ ջրամատակարարումն իրականացվում է կանոնավոր ու սպառողներին տրվում է պահանջվող որակի ջուր:

● Ընդ որում, բոլոր միջոցառումների մասին ՀԿԾ-ն մամուլի հաղորդագրություններ է ուղարկել իր հետ

համագործակցող մոտ երեք տասնյակ ՁԼՄ-ների, տեղեկատվություն է հրապարակել որոշ թերթերում, իր պաշտոնական կայքէջում ու ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև իրազեկել է համակարգի աշխատակիցներին: Այս ամենի շնորհիվ ապահովվել է հանրության բավարար իրազեկում:

● Հաշվի առնելով այդ օրերին «Վեոլիա Ջուր» Ընկերությունից օբյեկտիվ պատճառներով հանրության դժգոհությունը, որոշ անձանց ու ձեռնարկությունների կողմից փորձ է արվել օգտագործել վարկաբեկող հրապարակումներ, ՀԿԾ-ն պատասխան խոսքի իրավունքով երեք պարզաբանում է ներկայացրել հանրությանը: Դրանք են. «Վեոլիա Ջուր»-ը հիշեցնում է «իրավագետներին». Քաղաքացիական օրենսգիրքը դեռ գործում է», «Վեոլիա Ջուր»-ը չի մեկնաբանում, բայց զգուշացնում է «Արագենին» և «Վեոլիա Ջուրը» հասկանում է Լև Գրուպին ու ցավակցում:




● Հուլիսին կատարած աշխատանքներից են Օպերայի ու բալետի թատրոնում «Վեոլիա Ջուր» Ընկերության հովանավորչությամբ տեղի ունեցած ֆրանսիացի փոքրիկ երգիչների համերգին պատրաստած պաստառները Ընկերության լոգոյով:

● Հաշվետու ամսին շարունակվել են սպասարկվել Ընկերության «Veolia.am» պաշտոնական կայքէջը, էջերը Ֆեյսբուքում, Թվիթերում ու Յություբում, որտեղ տեղադրվել են հաղորդագրություններ, լուսանկարներ ու տեսանյութեր պաշտոնական միջոցառումների, այցելությունների, Ընկերության ընթացիկ աշխատանքների ու ձեռքբերումների վերաբերյալ:

Ընդ որում, առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ՀՀ ՀՕԿՀ-ի որոշված կարգով ջրանջատումների մասին հաղորդագրությունների հրապարակմանը՝ ի տես հանրության: ՀԿԾ-ի աշխատանքի վերջին կարևոր ուղղությունը հանդիսացել է ՁԼՄ-ների հետ ակտիվ ու մշտական համագործակցությունը, որի միջոցով օպերատիվ կերպով պարզաբանում է տրվել նրանց հուզող հարցերին՝ Ընկերության վերաբերյալ հրապարակումների օբյեկտիվությունն ապահովելու նպատակով:

**ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**





6.1 Փաստաթղթերի մշակում

● Ելնելով ՀՀ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքի պահանջներից ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ Չափագիտության ազգային մարմնի հետ համագործակցության արդյունքում, ձեռք է բերվել Ընկերության դյուրակիր գազավերլուծիչների ավտոմատ թեստավորման և կարգաբերման կայանքի չափման միջոցի տեսակի հաստատման, սերտիֆիկատը, գրանցվել է չափման միջոցների գրանցամատյանում և ստացել վկայագիր՝ ՀՀ-ում կիրառման թույլտվության վերաբերյալ:




6.2 Դասընթացներ



● «Տրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի կողմից Ընկերության մասնագետ-տեսուչների միջին-մասնագիտական որակավորման դասընթացների նախապատրաստական աշխատանքների շրջանակներում Ծառայությունը, դասընթացների մասնակիցներին ընտրելու նպատակով, գիտելիքների գնահատում (թեստավորում) է անցկացրել թվով 185 աշխատակիցների շրջանում՝ նախապես մշակված նախնական գնահատման հարցաշարերով: Հարցաշարի գնահատումը կատարվել է հատուկ մշակված սանդղակով հաշվի առնելով մասնակցի թե ջրամատակարարման և օգտագործման կանոնների, թե հաղորդակցման հմտությունների մասով գիտելիքների իմացության մակարդակները: Արդյունքների հիման վրա կձևավորվեն պիլոտային վերապատրաստման ծրագրի առաջին փուլի մասնակիցների խմբերը:

2018թ. հունվար-հուլիս ժամանակահատվածում առողջության և անվտանգության մասով կազմակերպված դասընթացներ/թեստավորումներ*



* թեստավորումն իրականացվել է ՖՀՄՈՒԿ-ում նախատեսվող կումերցիոն մասնագետ-տեսուչների մասնագիտական որակավորման դասընթացի շրջանակներում

6.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացող միջոցառումների կիրառում

Ուսումնասիրվել է Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 7 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:







«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.Երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.Երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am

